ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Եվրոպական միության աջակցությամբ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի և ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի մասնագետների համար կազմակերպվել է երկօրյա դասընթաց:

ԱՀԿ-ի դասընթացավարը մասնակիցներին ներկայացրել է SARS-CoV-2 տարբերակների հայտնաբերման մեթոդաբանությունը և իրական թեստերի օրինակի վրա սովորեցրել, թե ինչպես պետք է նախապատրաստել ՊՇՌ թեստավորման գործիքը, պատրաստել խառնուրդը և վերլուծել արդյունքները:

Այս մեթոդաբանությունը կնպաստի SARS-CoV-2 նոր մտահոգիչ տարբերակների վաղ հայտնաբերմանը:

ԵՐԵՎԱՆՈՒՄ COVID-19-ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է

Ռիսկի խմբերում ընդգրկված **55** տարեկանից ցածր անձինք պատվաստվում են **Sputnik–V**-ով, իսկ **55**-ից բարձր տարիք ունեցողները՝ **AstraZeneca**-ով:

Հայաստան են ներկրվել **24000** դեղաչափ **AstraZeneca** և **15000** դեղաչափ **Sputnik–V** պատվաստանյութերը: Պատվաստումներն իրականացվում են կամավորության սկզբունքով:

Հավելենք նաև, որ նախկինում ձեռք բերված 2000 դեղաչափ Sputnik-V պատվաստանյութով պատվաստվել են COVID-19 սպասարկող բժշկական կենտրոնների բուժանձնակազմերը:



55 տարեկանից ցածր անձինք պատվաստվում են **Sputnik–V**-ով: **55**-ից բարձր տարիք ունեցողները պատվաստվում են **AstraZeneca**-ով:

Պարկինսոնի հիվանդությունը նյարդաբանի պրակտիկայում

Ակադեմիկոս Ս.Խ. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի Նյարդաբանության և նեյրովիրաբուժության ամբիոնը՝ ՀՀ ԱՆ-ի, **Սոմնուս** նյարդաբանական կլինիկայի և **Շարժողական խանգարումների հայկական խմբի** հետ համատեղ, ապրիլի 20-ին կազմակերպում է **«Պարկինսոնի հիվանդությունը նյարդաբանի պրակտիկայում»** թեմայով սեմինար, որը տեղի է ունենալու «Best western plus congress» հյուրանոցի «Ball room» դահլիճում, ժամը՝ 16:00-18:30-ն:

Սեմինարի ընթացքում պրակտիկ ձևով և տեսանյութերի միջոցով կներկայացվեն Պարկինսոնի հիվանդությամբ պացիենտների ախտորոշման և բուժման ժամանակակից մեթոդները:

Միջոցառման նպատակն է բժիշկ-նյարդաբանների շրջանում բարձրացնել իրազեկվածությունը Պարկինսոնի հիվանդության և պարկինսոնիզմի մասին, ինչպես նաև տալ պրակտիկ գիտելիքներ և հմտություններ նման պացիենտների ախտորոշման և բուժման համար:

Սեմինարի մասնակիցներին տրվում է ԱՆ կողմից հաստատված վկայական և շնորհվում է ՇՄԶ 2 տեսական կրեդիտ:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ COVID-19-Ի ԴԵՄ

Ապրիլի 17-ին ԱԱԻ-ն՝ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման Ազգային Կենտրոնի հետ համատեղ, կազմակերպել էր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բժիշկների և բուժքույրերի համար կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների վերաբերյալ առցանց համաժողով:



ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՆԱԽՈՍՆԵՐՆ ԷԻՆ

ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆ
«Արաբկիր» ԵԴԱԻ-ի գիտական ղեկավար

ԳԱՅԱՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ
ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի փոխտնօրեն, Իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավար

ՍՎԵՏԼԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի Իմունականխարգելման և կառավարելի վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության բաժնի պետ

ԱՐՄԱՆ ԲԱԴԱԼՅԱՆ
Մ.Հերացու անվան ԵՊԲՀ-ի ընդհանուր համաճարակաբանության ամբիոնի ավագ դասախոս

ԼՈՐԿԻ ԼԻԲԱՐԻԴՅԱՆ
Մանկաբույժ, «Cambridge Health Alliance»-ի առաջնային բուժօգնության արդյունավետության բարձրացման բժշկական տնօրեն, Հարվարդի բժշկական դպրոցի ինստրուկտոր

ԿԻՄ ՀԵՔԻՄՅԱՆ
Կոլումբիայի համալսարանի Սնուցումը մանկաբուժությունում ամբիոնի դասախոս, Հանրային առողջության ոլորտում VP&S ծրագրի տնօրենի տեղակալ, Հայաստանում Ամերիկյան համալսարանի դասախոս

ՅՈԼԻՆ ԿՈՋԱՈՂԼԱՆՅԱՆ
Նյու Յորքի Ա. Էյնշտեյնի բժշկական քոլեջի մանկական ինֆեկցիոն հիվանդությունների դասախոս, մանկական ինֆեկցիոնիստ

ԹԱՄԱՐ ՔԱԲԱՔՅԱՆ
Բեյրութի Ամերիկյան համալսարանի Առողջապահական գիտությունների ֆակուլտետի առողջության խթանման ամբիոնի դասախոս

Համաժողովին մասնակցել են նաև մասնագետներ Միացյալ Թագավորությունից:

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

COVID-19

ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

208520
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴԵՊՔ

935427
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

187466
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՑԱԾ ԱՆՁ

3878
ՄԱՀԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ

Ապրիլի 18-ի դրությամբ

3844 ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

547 ՆՈՐ ԴԵՊՔ

210 ԱՌՈՂՋԱՑԱԾ ԱՆՁ

16196 ԲՈՒԺՎՈՂ ՊԱՑԻԵՆՏ

19 ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔ

ՕՊԵՐԱՏԻՎ ՋԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ 060 83 83 00 -24/7

ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լրատվական գործունեությունն իրականացնում է **«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**:Վկայական թիվ 01Ա 016493, տրված 07.09.1995թ.:
Հղումը «Առողջապահության Լրատու»-ին պարտադիր է:
Մեր հասցեն է՝ 0051, Երևան,Կոմիտասի պողոտա 49/4 Հեռ.՝+374 10 23 90 38

Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար **Լուսինե Հովհաննիսյան**
Խմբագիրներ՝ **Մարո Գաբրիելյան, Նարինե Ավետիսյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Անդրեյ Աստվածատրյանի**